ETYMOLOGY OF THE NAME OF THE COUNTRY SUBARTU

A. H. Gharagyozyan

The country Subar (in Sumerian Su-bir/Šubar/Šubur) or Subartu (in Akkadian Šubartum/ Subartum/ina Šubari, in Assyrian mât Šubari),mentioned in Akkadian and Assyrian texts, is usually located on the river Tigris. Its name also has the form Subari in the documents of Amarna archives, and the form Šbr in Ugarit inscriptions.

Researches show that the country Subartu occupied the area of upstream of the Western Tigris. The origin of the name of the country has been caused by the geographical factor and meant "the country situated on the water coast (river or lake)".

In Armenia the toponym Subartu in the same value meets in the form Tsavdek (in Latin Zabdicene, in Syrian Beth Zabde) as the name of a territorial unit but in a narrow range, corresponding to the country Katmuhi in Assyrian sources, which is mentioned by Movses Khorenatsi in a traditional form "House of Cadmus".

In the ancient period it was one of the provinces of Armenia, which task was the protection southern borders of the country.

ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՔԱՅԱՏՈՀՄԻ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա . Հ. ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հայ ժողովրդի հեռավոր անցյալի պատմության ուսումնասիրության բնագավառում կան դեռևս չպարզաբանված բազմաթիվ հարցեր, որոնք պայմանավորված են հետազոտողների տրամադրության տակ եղած նյութի սահմնափակ լինելու հանգամանքով: Դա վերաբերում է հատկապես վաղ բիայնական շրջանին: Այդ տեսակետից կարևոր է և խիստ անհրաժեշտ Բիայնայում իշխող արքայատոհմի (կամ արքայատոհմերի) ծագումնաբանության հետ առնչվող հարցերի ուսումնասիրությունը: Այդ ուղղությամբ կատարված գիտական որոնումները հանգեցրել են այն հետևության, որ «Ուրարտու պետությունը ստեղծվել է ոչ թե հ.-ե. ժողովուրդների ներկայացուցիչների կողմից, ինչպես ենթադրել են որոշ հեղինակներ, այլ խուռիներին ազգակից ուրարտացիների»[1]: Ընդ որում, միանգամայն անտեսվել է բիայնական արքայատոհմի հայկական ծագումը: Եվ դա այն դեպքում, երբ «…ակնհայտ է, որ հայկական տարրը ամենասկզբից մասնակից է

[1] *Э. А. Грантовский*, Ранняя история иранских племен Передней Азии, М., 1970, с. 129. Վ. Խաչատրյանի կարծիքով, Տիգրիսի վերին ավազանի խուռիական երկրներից մեկի՝ Ուրուատրիի (Արարադ, Կորդուք) բնակիչներն Ասորեստանի շարունակական հարձակումների հետևանքով գաղթել են Վանի տարածաշրջան: Մ. թ. ա. 859 թ. նրանք այնտեղ ստեղծել են թագավորություն՝ դուրս գալով հայոց պետության կազմից, իսկ այնուհետև աստիճանաբար զենքի ուժով իրենց իշխանությունը տարածել Հայաստանում (Վ. Խաչատրյան, Հայաստանը մ. թ.ա. XV-VII դարերում, Ե., 1998, էջ 120, 121, 146):

եղել տերության ստեղծմանը»[2]:

Հայտնի է, որ բիայնական պետության պատմության առաջին փուլի ժամանակագրության մեջ պայմանական են միայն գահակալների կառավարման տարեթվերը: Երկրորդ փուլինը ունի շատ անորոշություններ, իսկ վերջին թագավորների տարեթվերը բացարձակապես պայմանական են[3]:

Բիայնայի առաջին թագավոր Արամեն իշխել է մինչև մ. թ. ա. 843 թ.: Այնուհետև մինչև մ. թ. ա. 832 թ. ոչինչ հայտնի չէ բիայնական թագավորների մասին[4]: Ըստ մասնագետների արտահայտած կարծիքների՝ Լութիպրին չի եղել թագավոր, իսկ նրա որդի Սուրդուրին հիմնել է նոր արքայատոհմ: Սակայն, եթե Լութիպրին թագավորել է, ապա նրա և որդու գահակալությունը կարճ է տևել[5]:

Այսպիսով, դեռևս պարզված չէ, թե ով է գահակալել Արամեից հետո՝ Լութիպրի՞ն, թե՞ նրա որդի Սարդուրին: Հայտնի չէ նաև՝ Լութիպրին եղել է Արամեի որդի՞ն, թե՞ այլ հարստության ներկայացուցիչ[6]:

Հին Արևելքի երկրներում, սովորույթի համաձայն, պաշտվող աստվածության երկնային խորհրդանիշի անունն անցնում էր թագավորին: Այս առումով բացառություն չի կազմել Սարդուրե I-ի հոր Լութիպրի անունը: Այդ անվան մեջ առկա է «լոյս («կրակ կամ ճրագ վառել») արմատը, որը բնիկ հայերեն բառ է և ծագում է հ.-ե Louk արմատի s-ով աճած louk's ձևից: Նրանից է բխում հայերեն «լոյս»-ը[7]: Անվան երկրորդ բաղադրիչն է հայերեն «բեր»-ը («բերումն, ընթացք, գալուստ»), որը ծագում է հ.-ե նախալեզվի bher արմատից[8]: Այսպիսով, Լութիպրի անունը կազմությամբ և իմաստով համապատասխանում է *Լուսաբերին*. «Արուսեակ… Մոլորակ լուսափայլս՝ նախընթաց արեգական ծագելոյ. որ և Լուսաբեր, այգաբեր, աստղ առաւօտու, իսկ յերևիլն նախ քան զմուտս արևու՝ կոչի Գիշերավար… Εωσφόρος, φωσφόρος, Lucifer »[9]: Ընդ որում, «Արուսեակն զվեց ամիս արուսեակ է, և զվեց ամիս Գիշերավար… Նմանութեամբ Սատանայ»[10]: Միևնույն ժամանակ Արուսյակը դիտվել է «որպէս Արեգակն. արև. *Ականն արևու ստեղծական արուսեկի»[11]: Ըստ հին հավատալիքների՝ «Սպասէին արուսեկին, որ է արե-

---

[2] ***Ս. Գ. Հմայակյան,*** Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1990, էջ 85:

[3] ***Б. Б. Пиотровский***, История и культура Урарту, Ер., 1944, с. 38. Մենք հիմք ենք ընդունել Ն. Վ. Հարությունյանի առաջարկած տարեթվերը:

[4] ***Н. В. Арутюнян,*** Биайнили, Е., 1970, с. 119-120.

[5] Մանրամասն տե՛ս ***Г. А. Меликишвили,*** Наиры-Урарту, Тб., 1954, с. 201.

[6] ***Н. В. Арутюнян,*** указ. соч. С. 119-120. Գ. Ա. Մելիքիշվիլու մոտ Սալմանասար III-ի (մ.թ.ա. 859-824թթ.) թագավորության 15-րդ տարին՝ մ.թ.ա. 844թ. թյուրիմացաբար նշվել է մ.թ.ա. 845թ., իսկ նրա գահակալության 27-րդ տարին՝ մ.թ.ա. 833թ. (տե՛ս ***Г. А. Меликишвили***, указ. соч., с. 200).

[7] Տե՛ս ***Հր. Աճառյան,*** Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. II, Ե., 1973, էջ 296:

[8] Տե՛ս ՀԱԲ, հ. I, Ե., 1971, էջ 440-441:

[9] Նոր բառգիրք Հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. I, Ե., 1979, էջ 374:

[10] ՆՀԲ, էջ 374: Հատկանշական է, որ քրիստոնեական առասպելաբանության մեջ Լուսաբերը (Lycifer) գահավիժած հրեշտակի՝ սատանայի անվանումն է (տե՛ս Советский Энциклопедический словарь, М., 1988, с. 736):

[11] ՆՀԲ, էջ 374:

գակն արդարութեան»[12]: Այսինքն՝ «…a-rus+e-ak “այգ”, Lucifer, բայց նաև արև»[13]: Ուշագրավ է նաև այն, «… զոր ոմանք ափրոդիտեայ, և այլք էրա անուանեն»[14]: Սրանից կարելի է եզրակացնել, որ իրոք, Արուսյակն ընկալվել է իբրև երկակի բնույթ ունեցող աստվածություն՝ Լուսաբեր և Գիշերավար, որպես երկու աստղ[15]: Ըստ մեկ այլ մեկնաբանության՝ «նվազ է Արայն քան զարուսեակն գեղեցիկ»[16]: Նկատենք, սակայն, որ «Արան, ոչ այլ ոք է, քան նույն ինքը՝ Լուսաբերը»[17]:

Այսպիսով, Լութիպրին, որի հայրանունն անհայտ է, նույնպես եղել է թագավոր՝ «Արև արքա» և հաջորդել է Արամեին՝ հանդիսանալով Արամյան արքայատոհմի ներկայացուցիչ[18], որովհետև բիայնական պետությունը համարվել է իշխող թագավորական տոհմի, ցեղի երկիր[19]: Հետևաբար պետք է արձանագրել, որ անհիմն է Բիայնական պետության արքայացանկի բաժանումը «Արամյան» և

---

[12] Նույն տեղում:

[13] ***Н. Я. Марр,*** Избранные работы, т. V, этно= глоттогония Восточной Европы, М-Л, 1935, с. 143.

[14] ՆՀԲ, էջ 896: «Միջագետքյան առասպելում Ներգալը գնում է անդրաշխարհ և վերադառնում այնտեղից էրրա անունով (էրրան Ներգալի մի հիպոստասիան է): Մյուս կողմից, էրրան համադրելի է պամփյուլացի հերոս էրի հետ. վերջինս զոհվում է, բայց դիակիզման խարույկի վրա վերակենդանանում: Այսինքն՝ էրրան ու էրը և՛ անունով և՛ կերպարով համապատասխանում են մեռնող և հառնող Արային» (***Ա. Պետրոսյան***, Հայկական դիցարանի հնագույն ակունքները, ՊԲՀ, 2004, N 2, էջ 228):

[15] ***Օ. Ս. Խնկիկյան***, Ցլագլուխ կոթողներ Վարդենիսի լեռներից և «Վիշապաքարերի մեկնության հարցի շուրջ», ԼՀԳ, 1997, N 3, էջ 155:

[16] ***Н. Адонц***, Діонисій Ѳракійскій и армянскіе толкователи, Петроградь, 1915, с. 278.

[17] ***Օ. Ս. Խնկիկյան***, նշվ. աշխ., էջ 155: «Կրեչմերը ստուգաբանում է Սարդուրի I-ի հոր Լութիպրի անունը որպես «կանաց տիրակալ» (լիկիերեն՝ Lada, ուրարտերեն՝ Luti, ավելացրած միտանիերեն՝ ipir, ուրարտերեն՝ euri)» (***Б. Б. Пиотровский***, Ванское царство, М., 1959, с. 48). Ն. Ադոնցը Լութիպրի անվան մասին գրում է, որ Ռուսայի կամ նրա հոր մականունը՝ Ուեդիպրի, հիշեցնում է Լուտիպրի, Սարդուրի I-ի հոր անունը: Uedi և lutu բառերը նշանակում են՝ «կին», իսկ ipri-ն euri-ի (տեր) հին ձևն է: Հետևաբար Լուտիպրի նշանակել է «նա, որի տերը տիկինն (աստվածուհին) է, կամ՝ «աստվածուհու հովանավորյալ»: Ըստ գիտնականի՝ «Եթե Ուեդիպրին Ռուսայի մականունը կամ երկրորդ անունն է, կարելի է ընդունել, որ Լուտիպրին էլ Արամեի մականունն է և, հետևաբար, Սարդուրի I-ը Արամեի որդին է» (***Ն. Ադոնց,*** Հայաստանի պատմություն, Ե., 1972, էջ 194): Ըստ Մ. Ս. Գավուքճյանի՝ «Լու-տիպրի (սեպագիրը կարելի է կարդալ նաև Լու-տիբրի) անուան Լու բաղադրիչը սումերերէն (եւ ընդհանրապես սեպագրութեան մէջ) նշանակում է «մարդ»…, իսկ տիբրի բաղադրիչը սումերական tibira բառն է, որ նշանակում է «մետաղագործ» կամ «Մետաղագործութեան աստուածը»: Որով Լուտիբրի /Լու-տիբիրա/ նշանակում էր «Մետաղագործ աստուածը» կամ «Մետաղագործ մարդ աստուածը» (Լու-տիբիր)՝ «Տապարակիրը» (***Մ. Ս. Գավուքճեան***, Հայ ժողովրդի ծագումը, Մոնթրէալ, 1980, էջ 106-107):

[18] Մ. Ս. Գավուքճյանի ճշգրտմամբ՝ «Արամէից յետոյ մեզ յայտնի ուրարտական արքան կոչվում է Լուտիպրի: Այս արքայի որդու՝ Սարդուրիի մասին մեր կատարած հետազոտությունները ցույց տուեցին, որ նա Արամի թոռն էր, որով նրա հայր Լուտիպրին էլ Արամէի որդին էր» (***Մ. Ս. Գավուքճեան***, նշվ. աշխ., էջ 106):

[19] ***Ա. Դարագյոզյան,*** Գեղամա երկիր, Եր., 2004, էջ 30:

«Սարդուրյան» արքայատոհմերի[20]: Բացի դրանից, Լութիպրին հայերեն Լուսաբեր անվան՝ սեպագրով արտահայտված տարբերակն է, ուստի այդ անվանաձևերի իմաստային համարժեքությունը, որը պայմանավորված է դիցաբանական պատկերացումներով, ենթադրում է բիայնական արքայատոհմի հայկական լինելը: Այդ մասին է խոսում նաև նույնպես սեպագիր վկայված հայերի *արմեն* անվան արտացոլումը Erimena թագավորի անվան մեջ[21]:

Եթե Լութիպրի և Էրիմենա թագավորներն ունեցել են հայկական ծագում, ապա նրանցից առաջ և հետո գահակալած արքաների հայկական ծագումը կասկած հարուցել չի կարող, որովհետև թագավորական իշխանությունը ժառանգական էր, և բոլոր դեպքերում գահն անցել է հորից որդուն: Ավելին, պաշտվող աստվածության՝ Արուսյակ-Լուսաբերի հայերեն *Ար/Արա* անունը կարելի է տեսնել ինչպես *Արամա (A-ra-ma)*[22], այնպես էլ *Արգիշթե*, իսկ *արշ/ա/*-«վաղորդյան արև» բառը՝ *Ուրսա* (տարբերակ՝ *Ռուսա*) արքայական անուններում[23]: Ընդ որում, «…հնարավոր է Menua թագավորի անունը ևս մեկնաբանել հայկական հողի վրա»[24]:

Հետևաբար միանշանակ է, որ Բիայնական թագավորության արքայատոհմը ունեցել է հայկական ծագում:

К ВОПРОСУ О ПРОИСХОЖДЕНИИ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ ВАНСКОГО ЦАРСТВА

А. А. Карагезян

Исследования показывают, что правящая династия имела армянское происхождение. Армянское имя почитаемого главного божества-Ар/Ара(=Утренняя заря, Люцифер, Солнце) можно проследить в именах всех ванских царей.

---

[20] Մանրամասն տե՛ս ***Г. А. Меликишвили***, указ. соч., с. 201-202.

[21] ***Գ. Բ. Ջահուկյան,*** Հայոց լեզվի պատմություն, նախագրային շրջան, Ե., 1987, էջ 286: Ա. Պետրոսյանը նշում է, որ Erimena անունը «… հայկական ավանդական անվանացանկում առավել նման է Արամանյակին» (***Ա. Պետրոսյան***, Ուրարատուի վերնախավի էթնիկական պատկանելության խնդիրը, ՊԲՀ, 2005, N 3, էջ 213):

[22] «Նույնն է ինչ Արամու, Արրամու» (***И. М. Дьяконов***, Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, N 2 с. 299, прим. 2).

[23] Տե՛ս ***Ա. Ղարագյոզյան,*** նշվ. աշխ., էջ 25, ծան. 9, 10: Է. Ա. Գրանտովսկին, որը բիայնական պետության արքայատոհմի հ.-ե. ծագման մասին տեսակետը որոշակիորեն կայացած չի համարում, կարծում է, որ ուրարտական արքայատոհմի առանձին ներկայացուցիչներ կրել են իրանական անուններ, ինչպես, օրինակ, Argišti անունը, որն ըստ նրա դեռևս ուրարտերեն չի բացատրվում, սակայն շատ մոտ է էսքիլեսի (մ. թ. ա. 525-465թթ.) «Պարսիկներ» ողբերգության մեջ հիշատակվող հին պարս. Ἀργῆστης անվանը (***Э. А. Грантовский***, указ. соч., с. 308). Այս տեսակետը, սակայն, ընդունելի չէ: Ἀργῆστης- ը (հուն. ἀργέστης «արևելեան կամ հիւսիս-արևմտեան քամի». ծագում է argós «սպիտակ, փայլուն» արմատից. թէ այդ քամին ամպերը ցրուելով երկինքն է պարզում (ՀԱԲ, հ. I, էջ 305) «հիշվում է որպես պարսկական անուն, բայց այն պարսկերենով չի ստուգաբանվում» (***Ա. Պետրոսյան***, Ուրարտուի վերնախավի էթնիկական պատկանելության խնդիրը, էջ 212):

[24] ***Գ. Բ. Ջահուկյան,*** Հայկական շերտը ուրարտական դիցարանում, ՊԲՀ, 1986, N 1, էջ 55:

TO A QUESTION OF AN ORIGIN OF A RULLING DYNASTY OF VAN KINGDOM

A. H. Gharagyozyan

Reserches shows that the rulling dinasty had Armenian origin. Armenian name of esteemed diety Ar/Ara (=Dawn, Lucifer, Sun) can be tracked in names of Van kings.

ՀԱԼԴԵ ԴԻՑԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ա . Հ. ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Վանի թագավորության գլխավոր աստվածություններից մեկը եղել է Արդեն: Նրա գաղափարագիրը բիայնական և ասուրական արձանագրություններում նշանակել է «արև», «օր»[1]: Հետևաբար Արդե նշանակում է «արև», «Արևի աստվածություն», իսկ մեկ այլ՝ sard «արև» բարբառային տարատեսակությունը մտնում է Վանի թագավոր Սարդուրի անվան կազմի մեջ. բառացի՝ «Արևատուր», և այդ նույն sard-ը այն Սարդես քաղաքի՝ Լիդիայի մայրաքաղաքի անվան հիմքում է, որի մասին Քսանթոս Լյուդացին իրազեկում է, որ տեղական խոսվածքում բառը նշանակում է «տարի», հետևաբար, ըստ հնէախոսության՝ «արև»[2]:

Հայտնի է, որ Արդինի (տարբերակ՝ Արինա)[3] քաղաքը եղել է բիայնական պետության կարևոր պաշտամունքային կենտրոնը: Թվում է, թե «ինչպես քաղաքը,

---

[1] ***Б. Б. Пиотровский,*** История и культура Урарту, Е., 1944, с. 277. Արդինի քաղաքանունը փորձել են ստուգաբանել նաև խուռիերեն «arte»-քաղաք» բառով (տե՛ս ***Г. А. Меликишвили,*** Наиры-Урарту, Тб., 1954, с. 88, ***И. М. Дьяконов***, Языки древней Передней Азии, М., 1967, с. 139).

[2] Տե՛ս ***Н. Я. Марр,*** Избранные работы, т. V, Этно-глоттогония Восточной Европы, М.-Л., 1935, с. 124. Գր. Ղափանցյանը «հնդեվրոպական ծագում է վերագրում Սարդի աստվածությանը և հետևելով Ա. Սեյսին, այս դիցանունը համադրում է լյուդիական Sardis «տարի» և կամ «արև աստված», իրանական sard «տարի» բառերի հետ, Սարդիին ընկալելով որպես տարեդիք» (***Ս. Գ. Հմայակյան***, Վանի թագավորության պետական կրոնը, Ե., 1990, էջ 17): Ըստ Գ. Բ. Ջահուկյանի՝ Sarduri անձնանունը ածանցված է «Sardi աստվածուհու անունից՝ արխայիկ – uri ածանցով» (***Գ. Բ. Ջահուկյան***, Հայկական շերտը ուրարտական դիցարանում, ՊԲՀ, 1986, N 1, էջ 46): Ուշագրավ է նաև այն դիտարկումը, ըստ որի «Արդի անվան Սարդի ձեւը… համապատասխանում է Արայեան Արա եղող Կարդ(-ոս-)-ին» (***Մ. Ս. Գավուքճեան***, Հայ ժողովրդի ծագում, Մոնթրէալ, 1980, էջ 111): Ի դեպ՝ «Անընդունելի է, իհարկե, Շեֆտելովիցի մոտ Սարդուրի անվան բացատրությունը որպես իրան. saradara» (***Э. А. Грантовский***, Ранняя история иранских племен Передней Азии, М., 1970, с. 129).

[3] Տե՛ս ***И. М. Дьяконов,*** Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, N 2, с. 267, прим. 9. Կարծիք է արտահայտվել նաև, որ Արինա (=Արինու) քաղաքը և